«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ . ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԸ, ՊԱՏԳԱՄՆԵՐՆ ՈՒ ԽՐԱՏՆԵՐԸ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՐՔԵՐՈՒՄ

Առարկան՝Հայոց եկեղեցու պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մ. Գալստյան

Ուսումնական հաստատություն՝ <<Երևանի հ. 45 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ

[redacted]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4

ԳԼՈՒԽ 1. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԸ, ՊԱՏԳԱՄՆԵՐՆ ՈՒ ԽՐԱՏՆԵՐԸ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՐՔԵՐՈՒՄ 5

1.1 Բարոյական պատգամներն ու խրատները Հին կտակարանի Սաղմոսների, Առակների գրքերում 5

1.2. Բարոյական պատգամներն ու խրատները Նոր կտակարանում.....11

ԳԼՈՒԽ 2 . ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 16

2.1. Աստվածաշունչը որպես բարոյական դաստիարակության միջոց 17

2.2. Աստվածաշունչը արժեքային համակարգի ձևավորման ուղի..... 21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 26

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 28

Այսօր մենք ապրում ենք հարափոփոխ գաղափարների և երևույթների մի ժամանակաշրջան, և իբրև արդյունք արտաքին այս երևույթների՝ մարդկության մեջ տիրում է անորոշություն հոգևոր և բարոյական արժեքների նկատմամբ, այն արժեքների, որոնք ազդում են մեր վարքի, առաջնահերթությունների և փոխհարաբերությունների վրա: Այսպիսի կյանքի շփոթ վիճակներում չսայթաքելու համար Աստվածաշունչը մեզ մատուցում է կանոններ, նորմեր, որոնք ուղղորդում են մարդուն, օգնում նրան ճիշտ կողմնորոշվել կյանքի դժվար իրավիճակներում և ցանկացած դեպքում մնալ բարոյական, չկորցնել բարոյական վեհ հատկանիշները: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ աստվածաշնչյան բարոյական նորմերը իրենց ուրույն տեղն ու դերը ունեն ժամանակակից մարդու արժեքային համակարգի ձևավորման գործում:

Նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել մարդու արժեքային համակարգի ձևավորման գործում Աստվածաշնչի դերը և նշանակությունը:

Խնդիրներն.

- Ներկայացնել աստվածաշնչյան բարոյական պատգամներն ու խրատները, որոնք արծարծված են Հին կտակարանի Սաղմոսների և Առակների գրքերում:
- Բացատրել Նոր կտակարանի բարոյական պատգամների ու խրատների դերը և կարևորությունը մարդու կյանքում:
- Ներկայացնել անձի արժեքային համակարգի ձևավորման վրա Աստվածաշնչի ազդեցությունն ու նշանակությունը:
- Ուսումնասիրել Աստվածաշունչը որպես բարոյական դաստիարակության միջոց:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԸ, ՊԱՏԳԱՄՆԵՐՆ ՈՒ ԽՐԱՏՆԵՐԸ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՐՔԵՐՈՒՄ

Աստվածաշունչը Աստծո և մարդկության փոխհարաբերության իսկական վկայարան է: Աստվածաշունչ, Սուրբ գիրք, Աստծո խոսք, Աստծո հայտնությունը մարդկությանը, օրենքների, իմաստության, երախտիքների, գործերի և փրկչական ծրագրի ամբող-ջությունը: Քրիստոնյաների նվիրական և սրբազան գիրքը: Սուրբ Գիրքը բազմաժանր, տարաբնույթ և բազմաբովանդակ գրքերի ժողովածու է, որը բաժանվում է երկու անքակտելի մասերի՝ Հին և Նոր կտակարանների: Այն գրքերը, որոնք մարգարեանում են և նախապատրաստում են Հիսուս Քրիստոսի ընդունելությունը, կոչվում են Հին կտակարան: Իսկ այն գրքերը, որոնք Փրկչի կյանքի ու նրա վարդապետության մասին են մտնում են Նոր կտակարանի կազմի մեջ:

Քրիստոնեության պատվիրաններն ուղղված են մարդու հոգևոր կատարելագործ-մանը. դրանք պատգամում են լինել բարի, արդար, անշահախնդիր, առաքինի, ձեռք մեկնել ընկածին, սիրել Աստծուն և մերձավորին: Այդ պատվիրանները ձևավորում են հոգևոր բարձր հատկանիշներ և բարոյականություն: Անձի զարգացման, արժեքային համակարգի ձևավորման գործում անփոխարինելի է Սուրբ Գրքի դաստիարակչական արժեքը:

1.1 Բարոյական պատգամներն ու խրատները Հին կտակարանի Սաղմոսների, Առակների գրքերում

<<Տիրոջ օրենքը կատարյալ է, վերափոխում է հոգին. Տիրոջ վկայությունը ճշմարիտ է, պարզամիտին իմաստուն է դարձնում: Տիրոջ կանոններն ուղիղ են, սիրտ են ուրախացնում: Տիրոջ հրամանը մաքուր է, աչքերին լույս է տալիս: Տիրոջ դատաստանները ճշմարիտ ու միանգամայն արդար են: Դրանք ոսկուց, իրոք, շատ փորձված ոսկուց ավելի ցանկալի են, մեղրից ու մեղրախորսխից ավելի քաղցր >>: [1]

[1] Աստվածաշունչ, գիրք Սաղմոս 111:7, 12:6, 13:3, 119:72,127, Առ. 8:10,11,19 :

Աստվածաշնչյան բարոյական պատգամը Աստծո կողմից սահմանված կյանքի կանոններն են, որոնք ցույց են տալիս, թե Աստված ինչպես է կամենում, որ մարդիկ ապրեն: Այն Աստծու կողմից տրված ավանդ, կտակ, պատվեր է: Իսկ խրատը՝ դաստիարակիչ, բարոյախոսական խորհուրդ, հորդոր է:

Աստծո պատկերով և նմանությամբ է ստեղծված մարդը: Նա կարողություն ունի փոխելու իրեն շրջապատող աշխարհը, ինչպես նաև տիրելու այն(հիշենք Աստվածաշնչի Ծննդոց գրքի առաջին գլուխը), անհրաժեշտ է, որ մարդն օժտված լինի բարոյական ար-ժեքների բացարձակ համակարգով: Այս անհրաժեշտության բացակայությունն աշխարհը կվերածեր քաոսի: Մարդը կարիք ունի ըստ արտաքին պատվիրանների, խրատների ուղղել իր արարքները և ճիշտ ճանապարհով քայլել: Միայն մարդն է, որ ունի հնարավո-րություն ու կարողություն կրելու բարոյական արժեքներ, իր կյանքի ընթացքում դրան-ցով առաջնորդվելու և իրեն հաջորդող սերուդներին փոխանցելու:

Ծննդոց գրքի 3-րդ գլխում նկարագրված է Ադամի և Եվայի մեղանչման պատմությունը: Թվում է, թե արգելված պտղից չօգտվելու պատվիրանը բռնադատում էր նրանց ազատությունը, բայց իրականում հակառակն էր. առաջին պատվիրանը աստվածային սիրո մեջ մտնելու, Աստծո հետ անմիջական հաղորդակցություն ունենալու և նրանց չարից պաշտպանելու համար էր:

Այս առումով էլ բարոյական բացարձակ արժեքներին հասնելու մի ամբողջական հա-մակարգ են ներկայացնում Տասը պատվիրանները: Մարդու բարոյական զարգացման, արժեքային համակարգում բարին չարից զանազանելու, արարքների համար պատաս-խանատվության զգացում ունենալու համար է տրվել Տասը պատվիրանների համա-կարգը:

Վաղնջական ժամանակներից սկսած՝ մարդկանց մտահոգել են բազմաթիվ հարցեր. ի՞նչ է սերը, ազնվությունը, արդարությունն ու բարությունը, ինչպես նաև ստորությունը, նախանձը, չարությունն ու ատելությունը: Տարբեր ժամանակներում ստեղծված և սերնդեսերունդ փոխանցվող առակներում, ասացվածքներում ժողովուրդը գովերգել է բարին ու արդարը և վատաբանել չարն ու մերժելին:

Բարությունը, արդարամտությունը, համեստությունը, ճշմարտասիրությունը բարոյական հատկանիշներ են. <<Բարու ճանապարհի սկիզբը արդարություն գործելն է >>[2]:

Մարդկային հասարակության բարոյական սկզբունքների, նորմերի, կանոնների համակարգ են իրենցից ներկայացնում Տասը պատվիրանները, որոնց մեջ արտացոլված է Աստծո կամքն ու ձգտումը՝ առաջնորդելու մարդկանց հավատքի ճանապարհով և նրանց միջև հաստատելու արդար և ազնիվ հարաբերություններ: Տասը պատվիրաններից առաջին չորսի մեջ բացատրվում են մարդու պարտականությունները և անելիքները Աստծու հանդեպ, իսկ մնացած վեցում՝ մերձավորների: Տաս պատվիրանները, որ հայտնի են որպես Հին կտակարանի օրենք, անհրաժեշտ են, որպեսզի մարդիկ նախօրոք պատրաստվեին ընդունելու Հիսուս Քրիստոսի պատվիրանները:

Տասը պատվիրաններն են.

1. Ես եմ քո Տեր Աստվածը, ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար:

2. Կուռքեր չունենաս:

3. Աստծու անունը զուր չտաս:

4. Պատվիր՛ քո հորն ու քո մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն հողի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ:

5. Մի՛ սպանիր:

6. Մի՛ շնացիր:

7. Մի՛ գողացիր:

8. Մի՛ ստիր:

9. Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր:

10.Քո մերձավորի ունեցածի վրա աչք մի՛ ունեցիր:

Առակների Գիրքն ասույթների և ուսուցողական խրատների ժողովածու է, որտեղ ար-ծարծված են բազում արդիական թեմաներ՝ արդարություն, հիմարություն,

[2] Աստվածաշունչ, գիրք Առակաց 16:5, էջ 754

հարստու-թյուն, աղքատություն, ծուլություն, նենգություն, կաշառք և այլ: Պետք է նշել Առակաց գրքի հետևյալ տողերը. <<Տիրոջ օրհնությունը արդարների գլխին է, բայց տարաժամ սուգը պիտի փակի ամբարիշտների բերանը>>, <<ծույլերը կարոտ պիտի մնան մեծության, բայց ժրաջանները կհասնեն մեծության>>, <<նենգամիտ մարդը գաղտնիքը հայտնում է ատյանում, բայց հոգով հավատարիմը ծածկում է գործը>>, <<աղքատությունը խեղճացնում է մարդուն, ժրաջան ձեռքերը հարստացնում են նրան>>: Նրանում օգտակար խորհուրդներ ենք գտնում այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ կեղծավորությունը, հանդգնությունը, խոսքը պահելը, երեխային կրթելն ու խրատելը, խաբեությունը, աղոթքը, ծաղրանքը, խոնարհությունը, պարտք տալը, բարությունը, վստահությունը և այլն. <<ով բարիք է անում, նա բարության շնորհ կգտնի>>, <<անզգամն անարգում է հոր խրատը, բայց հանդիմանությանը հնազանդ որդին ողջախոհ է>>, <<ծաղր անողին ծեծիր և միամիտը կխոհեմանա. եթե բանիմացին հանդիմանես, նա ավելի գիտուն կդառնա>>: Առակներ գիրքը պարունակում է բազում իմաստուն և Աստծուց ներշնչված խորհուրդներ:

Ամբարիշտները հակադրվում են արդարներին. ամբարիշը կբռնվի իր ծուռ ճանապարհներում, և նրա հարստությունը չի փրկի ցասման օրը: Արդարը կանգնած է կյանքի ճանապարհին: Կարևորվում է բարոյական մաքրությունը. Սողոմոնը շարունակ զգուշացնում է անբարոյությունից հեռու մնալու մասին: Ամուսնական հավատար-մությունը խախտողները դժբախտանում են և անպատվություն են բերում իրենց վրա: Առակաց գրքում նշվում է. <<ժրաջան կինն իր ամուսնու պսակն է. ինչպես փայտի համար վնասակար է որդը, այնպես էլ չարագործ կինը կորստի կմատնի ամուսնուն [3]>>, <<շնորհալի կինը բարձրացնում է ամուսնու փառքը, մինչդեռ անարգանքի աթոռ է իրավունք ատող կինը>>, <<իմաստուն կանայք շինում են իրենց տները, իսկ անզգամ կանայք կործանում են դրանք իրենք ձեռքերով>>, այսինքն յուրաքանչյուր կին ինքն է որոշում իր վարքագիծը և իր ընտանիքի բարօրությունը: Առակներում շատ նկարագրություններ կան այն մասին, թե ինչպիսին պետք է լինի

[3] Աստվածաշունչ,գիրք Առակաց 12:4 ,էջ 749

առաքինի կինը: Կինը չպետք է լինի կռվարար և ամոթալի վարմունք ունեցող: Խոհեմ, առաքինի, աստվածավախ կնոջ լեզվի վրա սիրառատ բարության օրենք կա:

Առակների գրքում խոսվում է նաև ինքնատիրապետման մասին. հարբեցողությունն ու որկրամոլությունը դատապարտվում են: Ինքնատիրապետումը օգնում է խուսափել նախանձից, որը փտություն է ոսկորների համար: Աստծու հավանությունն ունենալու համար պետք է չափավոր լինել ուտելու և խմելու հարցում: Ով չի շտապում բարկանալ, շատ խորաթափանց է, և նա ավելի մեծ է, քան քաղաք գրավող հզոր մարդը. <<սիրալիր պատասխանը մեղմացնում է զայրույթը, բայց խիստ խոսքը բարկություն է հարուցում>>, <<ամեն օրինված մարդ պարզամիտ է, բայց բարկացող մարդը տգեղ է կերպարանքով>>:

Մարդու կյանքում շատ կարևոր է որոշակի նպատակներ դնելն ու դրանց հասնելուն ձգտելը: Կյանքի գերագույն հաճույքներից մեկը արարումն է, ստեղծելը, աշխատանքի արդյունքը տեսնելը: Մարդը չպետք է իրեն զրկի այս ամենից և չլինի ծույլ: Առակաց գրքում նշվում է հետևյալ խրատը. <<մրջյունի մոտ գնա՛, նախանձի՛ր նրա գործերին և իմաստուն եղիր նրանից ավելի, քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ վերակացու, ո՛չ էլ գլխին տեր ունի, բայց ամռանը նա պատրաստում է իր ուտելիքը և հնձի ժամանակ ամբարում է իր առատ պաշարը: Կամ մեղվի մոտ գնա, տե՛ս, թե ինչպիսի գործունյա է նա և ինչպիսի ջանասիրությամբ է գործում: Թեպետև թույլ է ուժով, բայց սիրելի է ու մեծարելի բոլորի համար, որովհետև ինքը հարգեց իմաստությունը և արժանի եղավ հարգանքի: Մինչև ե՞րբ պիտի գամված մնաս, ո՛վ ծույլ, կամ ե՞րբ պիտի զարթնես քնից: Մի քիչ քնով ընկնես, մի քիչ նստես, մի քիչ էլ ձեռքերդ հանգչեցնես կրծքիդ, և, ահա, աղքատությունը կհասնի քեզ, և կարիքը կկանգնի դռանդ: Բայց եթե ծույլ չլինես, ապա քո ամառը պիտի հասնի աղբյուրի նման, և կարիքը, ինչպես չարամիտ այր, պիտի փախչի հեռու>>:[4]

Սաղմոսները խոսում են և՛ ներկայի, և՛ ապագայի, և՛ տեսանելի ու անտեսանելի էակ-ների մասին, սովորեցնում բազում բաներ՝ հարություն, Հիսուս Քրիստոս, հանդերձյալ կյանք, արդարների հանգստություն և մեղավորների

[4] Աստվածաշունչ, գիրք Առակաց 6:6,7,8,9,10,11 էջ 743

տառապանք, ինչպես նաև բարո-յական վարդապետություններ. <<Սաղմոսարանի յուրաքանչյուր բառը բովանդակում է մտքերի անհուն ծով>>:[5] Արդարների մասին Սաղմոսում նշվում է. <<Արդարի ունեցած քիչն ավելի լավ է, քան շատ ամբարիշտների ճոխությունը: Քանի որ ամբարիշտների բազուկները ջարդվելու են, բայց Տերն արդարներին նեցուկ է լինում: Տերը գիտի ուղիղների օրերը և նրանց ժառանգությունը հավիտյան է լինելու: Չար ժամանակներում չեն ամաչելու ու սովի օրերին բավարարված են լինելու>>: Արդարության հիմքում ընկած է արդարացի, անաչառ լինելը:

Աստվածաշնչի սաղմոսները կենդանի պատգամ են ողջ մարդկությանը: Ի հակա-դրություն հավիտենական Աստծու՝ մարդը մեղքի մեջ է ծնված ու փրկության կարիք ունի: Սաղմոսներ գիրքը ընդգծում է Աստծու օրենքը լսելու և Աստծուն ապավինելու անհրաժեշտությունը, զգուշացնում է չլինել ամբարտավան ու չգործել <<ծածուկ մեղքեր>>, խրախուսում է ընկերակցել ազնիվ ու ողջամիտ մարդկանց հետ: << Քանի որ դու Տիրոջը՝ մեր Ապավենին, քեզ ապաստարան դարձրիր, քեզ չարիք չի հասնելու, ու ոչ մի հարված չի մոտենալու քո հարկին>>, <<Աստված մեր ապավենն է ու մեր զորությունը, անմիջական օգնություն նեղության ժամին>>. այս Սաղմոսներում նշվում է Աստծուն ապավինելու կարևորության մասին:

Սաղմոսները բացահայտում են մարդու ներաշխարհը, նրա իղձերն ու զգացմունքնե-րը: Սաղմոսները սովորեցնում են ոչ միայն ապրել Աստծուն ապավինելով, երկյուղածությամբ և արդարությամբ, այլև ուսուցանում են, թե ինչպես և ինչ խոսքերով պետք է աղոթել կյանքի տարբեր իրավիճակներում: <<Երեսդ ծածկի՛ր իմ մեղքերից ու ջնջի՛ր բոլոր անօրենություններս: Մաքուր սիրտ ստեղծի՛ր մեջս և իմ ներսում շիտակ հոգի՛ նորոգիր: Փրկի՛ր ինձ արյան մեղքերից, իմ փրկության Աստված, ու իմ լեզուն բարձրաձայն երգելու է Քո արդարության մասին>>: Այս աղոթքը հոգևոր մաքրության համար է:

[5] Մեկնութիւն առ Հռովմայեցիս

Սաղմոսների, Առակների գրքերի բարոյական պատգամներն ու խրատները անհերքելի դեր ունեն մարդու բարոյական զարգացման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

1.2. Բարոյական պատգամներն ու խրատները Նոր կտակարանում

Հիսուս Քրիստոսի ուսումունքը, մարդու միտքն ու հոգին ազնվացնելով, քարոզում է ապրելակերպի բարոյական վեհ արժեքների ամբողջական մի համակարգ: Յուրաքան-չյուր քրիստոնյայի հոգևոր նկարագրի կարևոր բաղադրիչ է բարոյական դիմագիծը:

Քրիստոնեությունն արմատական փոփոխության սկիզբ դարձավ հատկապես մարդկանց բարոյագիտական պատկերացումների բնագավառում: Բարոյականության ճշմարիտ պատկերացումներն ու վեհ գաղափարները պետք է ծնվեին նախևառաջ մարդկանց հոգիներում, մտքերում: Դա իհարկե չէր նշանակում հրաժարում մինչև այդ եղած և Հին կտակարանում ամփոփված պատվիրաններից և օրենքներից: <<Ես չեմ եկել վերացնելու օրենքը կամ մարգարեներին, այլ լրացնելու>>, - ասում էր Հիսուսը:

Քրիստոնեական բարոյական իդեալին հասնելը դարձավ մարդու համար նպատակ, այդ իդեալներով առաջնորդվելը՝ ապրելաձև: Բարոյականության վերաբերյալ քրիստոնեական տեսությունը նոր մոտեցում և սկզբունք էր առաջադրում: Մարդուն, մարդկայինին վերաբերող այդ նոր մոտեցման հիմքում ամենից առաջ սերն է դրված: <<Աստված սեր է>>,-ասվում է Նոր կտակարանում:[6] Այդ սիրո ճանապարհը բարությունն է, ներողամտությունը դեպի մերձավորը: Աստծու համար ընտրյալ մարդիկ չկան: Բոլորը հավասարապես Աստծո արարածներ են: Յուրաքանչյուրը կարող է ազատվել մեղքից նախ մկրտությամբ, իսկ հետո՝ ապաշխարելով, դեպի բարին, ճշմարիտը, կատարյալն իր ամենօրյա ձգտումով, իր

[6] Նոր կտակարան, Հովհաննես 4:16, էջ 1398

գործով, իր ապրած կյանքով: Իր աշակերտներից Հիսուս Քրիստոսը պահանջում էր սիրել ոչ միայն բարեկամներին, որոնք փոխադարձաբար սիրում են. դա դժվար չէ, նույնն էին անում նաև մեղավորները: Սիրել նշանակում է հրաժարվել եսակենտրոն սիրուց, բարությամբ և սիրով վերաբերվել ուրիշներին: Հիսուս Քրիստոսն իր երկրային կյանքն ավարտեց խաչելությամբ, այսինքն մարդկանց փրկության համար արված ինքնազոհողությամբ: Այդ զոհաբերությունը մարդկանց նկատմամբ աստվածային անսահման սիրո արտահայտությունն է: Եվ ինչպես Աստված է անսահմանորեն սիրում ու պահպանում իր կողմից արարված ամեն ինչ, այդպես էլ մարդը պիտի սիրի իր արարիչ Աստծուն և աշխարհն ու մարդկանց: <<Սիրի՛ր քո Տեր Աստծուն>> և <<Սիրեցե՛ք միմյանց>>. այս պատվիրանները քրիստոնեական բարոյախոսության հիմքն են: <<Ով սիրո մեջ է ապրում,- ասում է Հովհաննես առաքյալը,- բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ>>: Աստծու և մարդու այսօրինակ հարաբերությունը նմանեցվում է բարեկամների հարաբերությանը, որի մասին Քրիստոսը ասում է. <<Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե, թե Տերն ինչ է անում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ հորից լսեցի, հայտնեցի ձեզ>>: Աստծու հանդեպ սերը պիտի արտահայտվի երախտագիտությամբ, որը մարդու շնորհակալության դրսևորումն է ի վերուստ տրված շնորհների համար: Աստծու նկատ-մամբ երախտագիտությունն արտահայտվում է աղոթքով, նվիրաբերությամբ, ողորմա-ծությամբ: Հիշենք Քրիստոսի խոսքը. <<Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին համար արեցիք այդ՝ ինձ համար արեցիք>>:[7]

<<Ո՛չ, այս ամենի մեջ մենք ավելի քան հաղթողներ ենք Նրանով, ով մեզ սիրեց, որովհետև համոզված եմ, որ ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանու-թյունները, ո՛չ զորությունները, ո՛չ ներկա և ո՛չ էլ գալիք բաները, ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը, ո՛չ էլ մի ուրիշ արարած չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց >>:

[7] Նոր կտակարան, Մատթեոս 24:40, էջ 1120

Հավատը, հույսը, սերը քրիստոնեական բարոյականության երեք հիմնական դրսևո-րումներն են:

Հավատալ նշանակում է վստահել: Հավատը մարդու բարոյական կամքի դրսևորումն է: <<Առանց Աստծու նկատմամբ հավատի, չի կարող լինել բարձր բարոյականություն, սրբություն և վեհություն>>, <<ով Աստծուց է, Աստծու խոսքերն է լսում >>, <<Ամեն մարդ ով ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է>>: Հավատի ամենազոր ուժի մասին է վկայում Քրիստոսն ինքը, երբ անհնարը հնարավոր է համարում հավատացյալների համար: Նոր կտակարանում նշվում է. <<Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մանանեխի հատիկի չափ հա-վատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեղափոխվիր այստեղից այնտեղ և կտեղափոխվի, և որևէ բան ձեզ համար անհնարին չի լինի>>:[8]

Հույսը կապված է ինչպես քրիստոնեության, այնպես էլ բարոյականության հետ: Աշ-խարհիկ կյանքում հույսի աղբյուրը ենթադրությունն է, ցանկությունը: Քրիստոնեական հույսի նպատակակետը ոչ միայն բարոյական և հոգևոր բարիքն է, այլև նյութական, մարմնավոր (առողջություն, ունեցվածք): Պատահական չէ, որ Քրիստոսն ինքը սովորեց-նում է աղոթել <<հանապազօրյա հացի>> համար: Քրիստոնեական իմաստով հույսի աղբյուրը և նպատակը Աստված է: Հավատն ու հույսը սերտորեն կապված են: Եթե հավատը համոզում և վստահություն է Աստծու նկատմամբ, ապա հույսը <<ցանկալիի և սպասելիի>>, այն է՝ աշխարհի արարչության և մարդու փրկության իրականանալիու-թյան համոզումն ու վստահությունն է: <<Եվ հույսը չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը մեր սրտերում սփռված է Սուրբ Հոգու միջոցով, որ մեզ տրվեց>>:

Մարդը սխալվում, վնասվում, մեղք է գործում՝ ենթարկվելով իր ներքին զգացմունք-ներին, ապրումներին: Մեղք գործելիս մարդը կորցնում է մաքուրը, բարձրն ու վեհը ընկալելու ընդունակությունը, մերձավորին սիրելու զգացումը: Նոր կտակարանում զգուշացվում է՝ <<ամեն ոք, ով մեղք է գործում, մեղքի ծառա է>>, <<երանի այն մարդուն, որին Տերը մեղք չի վերագրում>>, <<դուք ձեր անձերը մեռած

[8] Նոր կտակարան, Մատթեոս 17:19, էջ 1106

համարեցե՛ք մեղքի համար, բայց կենդանի՝ Աստծու համար>>, <<այսուհետև թող մեղքը չթագավորի ձեր մահկանացու մարմինների մեջ՝ հնազանդեցնելու ձեզ իր ցանկություններին>>: Մեզանից ամեն մեկը գիտի, թե որ արարքներն են լավ կամ բարի, և որոնք՝ վատ կամ չար: Այս դեպքում պետք է նշել աստվածաշնչյան այս տողերը. <<Ով որ գիտե, թե ինչ է բարին ու չի անում, նրա համար այդ մեղք է>>:

Շրջապատի հետ մարդու փոխհարաբերություններն առաջին հերթին պետք է լինեն արդարացի, օրենքի, օրինականության սահմաններում: <<Հիմա ի՞նչ, մե՞ղք գործենք, քանի որ Օրենքի տակ չենք, այլ շնորհի: Երբե՛ք: Դուք չգիտե՞ք, թե ում որ ձեր անձերը որպես ծառա հնազանդվելու ներկայացնեք, դառնում եք նրա ծառան, որին հնազանդվում եք. լինի դա՝ մեղքին, որ տանում է մահվան, թե հնազանդությանը, որ տանում է արդարության>>:

Բարոյական կատարելիության ճանապարհը պարտադիր է ամեն մարդու համար, ով ձգտում է ներքին խաղաղության, ուրախությամբ և խնդությամբ լեցուն կյանքի՝ մաքուր խղճով, պատրաստ բարի գործերի: Ավետարանական պատվիրաններն ու պատգամները ընդարձակվելով գրավում են մարդու ողջ կյանքը, տանում կատարելիության ճանապարհով:

ԳԼՈՒԽ 2 . ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Բարոյականությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մարդկանց վարքը կարգավորող նորմերի, սկզբունքների և կանոնների ամբողջությունն է: Ըստ իս՝ բարոյական նորմերը հենվում են հասարակական կարծիքի, համոզմունքների, ավանդույթների, սովորույթների ուժերի վրա: Բարոյականությունը երևան է եկել մարդկության արշալույսին, զարգացել և փոփոխվել է մարդկային հասարակության զարգացման հետ միասին: Մարդու բարոյական կերպարի ձևավորման գործում մեծ է աստվածաշնչյան խրատների դերը, դրանք կարող են ուղղորդել և օգնել մարդուն՝ սեփական բարոյական հատկանիշների ձևավորման գործում: Եվ յուրաքանչյուր քրիստոնյայի պարտքն է համապատասխանեցնել իր բարոյական հատկանիշները, զարգացումը աստվածաշնչյան խրատներում արծարծված բարոյական նորմերին:

Մարդու բարոյական զարգացումը տեղի է ունենում նրա ամբողջ կյանքի ընթացքում: Բարոյական դաստիարակության հիմքերը դրվում են վաղ մանկության տարիներին: Այդ իսկ պատճառով Աստվածաշնչի հետ երեխաները պետք է առնչվեն դեռևս վաղ մանկու-թյունից: Երեխայի և դեռահասի բարոյական դաստիարակությունը կարևոր տեղ է զբաղեցնում բազմակողմանիորեն զարգացած անձնավորության ձևավորման գործում՝ ազդեցություն գործելով մարդու մտավոր, ֆիզիկական զարգացման վրա: Ըստ էության, այստեղ կատարվում է անձի բոլոր կողմերի ազդեցությունների ամենաբարդ փոխներթափանցում: <<Մարդը չի դաստիարակվում մաս առ մաս,-գրում է Մակարենկոն,- նա ստեղծվում է այն բոլոր ազդեցությունների գումարի համադրումով, որոնց նա ենթարկվում է>>:

Բարոյական դաստիարակության մեջ մեծ տեղ է գրավում հասարակության մեջ ընդունված հասարակական վարքի, նորմերի և կանոնների, բարոյականության սկզբունքների պարզաբանումը: Բարոյական նորմերի յուրացումը հարստացվում է այդ նորմերի նկատմամբ մարդու հուզական վերաբերմունքով: Բարոյական նորմերը նշանակալից չափով որոշում են այն դրդիչ մոտիվը, որն առաջ է բերում այս կամ այն

գործողությունները: Բարոյական զգացմունքները, բարոյական ապրումները, բարոյական հարաբերություններն ունեն խոր անձնային երանգ: Նրանք մարդուն տալիս են բավարարվածություն ազնիվ արարքից կամ մտադրությունները առաջ են բերում խղճի խայթ՝ բարոյական նորմերը խախտելիս:

Բարոյական դաստիարակությունն իրագործվում է անձի ամբողջ կենսագործունեու-թյան ընթացքում, և պետք է նշել, որ այս դաստիարակության վրա մեծ ազդեցություն են ունենում տարիքը և այն միջավայրը, որը որոշիչ ձևով ներգործում է մարդու արժեքային կողմնորոշման վրա(ընտանիք, հասարակություն):

2.1. Աստվածաշունչը որպես բարոյական դաստիարակության միջոց

Անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման գաղափարն առաջ է քաշվել դեռևս հին հույների կողմից: Նրանց է պատկանում <<առողջ հոգին առողջ մարմնի մեջ>> ասույթը, որով հստակորեն բանաձևված է տվյալ գաղափարը: Անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացում ասելով պետք է հասկանալ մտավոր, ֆիզիկական, բարոյական, աշխատանքային, գեղագիտական դաստիարակության միասնությունը, որոնք էլ կազմում են անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնական կողմերը: Համակողմանի զարգացման կողմերը ենթադրում են մեկը մյուսին և մեկը մյուսից անկախ իրականացվելու դեպքում կխանգարեն անձնավորության զարգացման և ձևավորման բնական ընթացքին: Անձնավորության ներդաշնակ զարգացման հետ գործ ունենք այն դեպքում, երբ զարգացման յուրաքանչյուր կողմ, ասենք, օրինակ՝ մտավոր զարգացումն առաջ է մղում բարոյական, աշխատանքային, ֆիզիկական և գեղագիտական դաստիարակությանը և խթանում է դրանցից յուրաքանչյուրը: Դաստիարակության յուրաքանչյուր կողմ պետք է կարևոր դեր կատարի մյուս կողմերի զարգացման համար: Միայն այս դեպքում կարելի է խոսել մարդու համակողմանի և ներդաշնակ զարգացման մասին:

Անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացումը պահանջում է մարդու բոլոր հնարավորությունների բացահայտում, նրա ընդունակությունների և հակումների՝ անհատականության զարգացում:

Դաստիարակության յուրաքանչյուր կողմ առաջին հերթին պահանջում է տվյալ բնա-գավառի մասին խոր և կայուն գիտելիքների հաղորդում, որն իրականացվում է մարդու մտավոր դաստիարակության միջոցով: Ինչ բարոյական դաստիարակության մասին կա-րող է խոսք լինել, եթե մարդը չունի բարոյական հստակ պատկերացումներ, խոր և կայուն գիտելիքներ բարոյական սկզբունքների մասին և չի ձևավորվում անձնավորության բարոյական աշխարհայացքը:

Բարոյական դաստիարակությունն անձնավորության համակողմանի զարգացման անհրաժեշտ կողմն է: Գիտակցության ծագումն ու զարգացումն անհնարին կլինեին, եթե մարդը չիմաստավորեր իր և իր նմանների կապի անհրաժեշտությունը: Այդ հարաբերությունները կարգավորելու գործում անփոխարինելի է Աստվածաշունչը, նրանում արծարծված բարոյական հատկանիշները: Հասարակական վարքը կարգավորող նորմեր, սկզբունքներ և կանոններ էին ստեղծվում և ամրագրվում մարդու գիտակցության մեջ և վարքագծում: Գիտակցության զարգացումը տանում էր դեպի իմաստավորված և կատարելագործված բարոյական վարքի ձևավորում: Վարքի կարգավորիչներ են դառնում անձի հարաբերությունները, դիրքորոշումները, արժեքային կողմնորոշումները: Մարդկության զարգացման ընթացքում համակարգվում և ամբողջական տեսք էր ստանում բարոյականությունը՝ դառնալով հասարակական գիտակցության առաջատար ձև: Որոշակի բովանդակություն էին ստանում բարու, չարի, արդարության, իրավունքի, պարժի, խղճի, կյանքի իմաստի, երջանկության հասկացությունները, վերածվում էին բարոյական սկզբունքների և իդեալների: Բարոյական իդեալը մարդկային այնպիսի համակեցության արտացոլումն է, որտեղ լավագույն ձևով կառուցվում է մարդկային կյանքի իմաստը, որի բարձրագույն արտահայտությունը երջանկության հասնելն է: Երջանկությունը մարդկանց բարոյական այնպիսի բավարարումն է, որ նրանք ստանում են իրենց հիմնական

վարքագծի ճշտության, վեհության և ազնվության գիտակցումից: Երջանկությունը արդարության և ազնվության ճանապարհով մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների լիակատար բավարարումն է, բարոյական և գեղագիտական լիարժեք բավականություն ստանալը, որի զգացումը մարդիկ ապրում են իրենց կյանքի և կենցաղի բոլոր ոլորտներում:

Բարոյական մշակույթը, լինելով մարդկային հասարակական կյանքի և գործունեության արդյունք, դառնում էր մարդու հոգեկանի էական կողմը, կապվում էր նրա ներաշխարհի, նրա սուբյեկտիվ արժեքային համակարգի հետ: Մարդու բարոյական գիտակցության ձևավորումը բարոյական դաստիարակության խնդիրն է: Մարդը նախ և առաջ պետք է հասկանա, թե ինչ է բարոյականը՝ բարին, չարը, հայրենասիրականը, արդարացիու-թյունը, որպեսզի կարողանա դրսևորել գիտակցված բարոյական վարքագիծ: Անձնավորության բարոյական գիտակցության հիմնական տարրերն են բարոյական պատկերացումները, գիտելիքները բարոյական երևույթների և հասկացությունների մասին, բարոյական իդեալները, համոզմունքները, սկզբունքները և բարոյական աշխարհայացքը: Գիտակցության բարոյական ձևը մարդկային գիտակցության ամենավաղ ձևերից մեկն է, որը ծագել է հասարակության ձևավորման հետ միաժամանակ, որպես մարդկանց համատեղ կյանքի բոլոր բնագավառներում նրանց վարքի ու վարվելակերպի նորմերի, սովորույթների և փոխօգնության ըմբռնում և պրակտիկ գիտակցում: Բարոյական գիտակցության արտացոլման օբյեկտը մարդկանց վարքի և վարվելակերպի ամենաբազմազան հարաբերությունների ամբողջությունն է, որոնք ձևավորվում են նրանց համատեղ կյանքի և կենսագործունեության ընթացքում:

Բարոյական դաստիարակության երկրորդ խնդիրը բարոյական զգացմունքների դաստիարակումն է: Զգացմունքը մարդու սուբյեկտիվ, հուզական, արտաքին աշխարհի և սեփական ներաշխարհի արտացոլումն է: Բարոյական են այն զգացմունքները, որոնք դրական են հասարակական արժեքների նկատմամբ և բացասական ուղղվածություն ունեն դեպի անբարոյական, չար երևույթներն ու

անվայել վարքի դրսևորումներ: Բարո-յական զգացմունքը, զուգակցվելով բարոյական գիտակցության հետ, կարող է երաշխա-վորել մարդու բարոյական վարքագիծը:

Բարոյական դաստիարակության կարևոր խնդիր է նաև անձնավորության բարոյական վարքագծի ձևավորումը: Դաստիարակությունը ոչ միայն գործընթաց է, այլև արդյունք: Դաստիարակության արդյունքները դրսևորվում են որպես անձնավորության բնութագրող որակներ, երբ ամրագրվում են նրա վարքագծում և գործունեության մեջ դրսևորվում են օբյեկտիվ պահանջմունքի ուժով:

Մարդու բարոյական կերպարը ներառում է բարոյական գծերի ու հատկությունների ամբողջ բազմազանությունը նրանց փոխադարձ կապի և փոխներթափանցման մեջ: Իրենց ամբողջության մեջ նրանք որոշում են անձնավորության ընդհանուր ուղղվածությունը, որն իր հերթին ազդում է առանձին բարոյական գծերի զարգացման վրա: Բարոյական դաստիարակությունը մի ամբողջական գործընթաց է, որն ուղղված է աճող սերնդի կողմից վարքի կանոնների և նորմերի տիրապետմանը: Բարոյական նորմերի իսկությունը ձեռք է բերվում կարգավորիչ մեխանիզմների միջոցով, որոնց օգնությամբ նորմատիվ պահանջները փոխակերպվում են անձի ներքին, անհրաժեշտ հարաբերության, դառնում նրա բարոյական որակները: Բարոյական նորմն ունի վարքի ընդհանուր պարտադիր սկզբունքի բնույթ, այսինքն այն տալիս է պատկերացում, թե ինչպիսի գծերով և որակներով պետք է օժտված լինի մարդը որպես բարոյական անձ: Բարոյայական նորմի իրականացումը կապված է հասարակական կարծիքի ու մարդու խղճի հետ: Հասարակական կարծիքը խաղում է արտաքին սոցիալական, իսկ խիղճը՝ ներքին վերահսկողության դեր: Բարոյական նորմերը՝ որպես մարդու վարքի արտաքին կարգավորիչներ, չեն կորցնում իրենց ակտուալությունը, բայց և բավարար չեն մարդու վարքը կառուցելու հարցում: Անհրաժեշտ է նաև վարքի ներքին կողմնորոշիչը՝ արժեքը: Ըստ Ս.Լ. Ռուբինշտեյնի, <<անհրաժեշտը>> մի կողմից հակադրվում է անհատին, քանզի դա գիտակցվում է որպես <<անկախ>>, այսինքն՝ հասարակայնորեն նշանակալի, որը ենթակա չէ սուբյեկտիվ կամայականությունների: Եթե մենք ապրում ենք ինչ -որ բան որպես <<անհրաժեշտ >>, այն դառնում է մեր

անձնական ձգտումների, մարդու անձնապես նշանակալի, սեփական համոզմունքների հիմքը: Ոչ բոլոր դեպքերում է ցանկացած ինքնակառավարման փորձ դառնում նորմից անցում արժեքի, այլ միայն այն դեպքում, երբ դա ունենում է մարդու համար դրական ու տվյալ դեպքում արժեքային ուղղվածություն, այսինքն՝ արժեքը սուբյեկտի կողմից էմոցիոնալ յուրացված նորմն է, որը դուրս է գալիս նորմերի սահմաններից, քանի որ ձեռք է բերում մարդու համար դրական նշանակություն և դրական հույզեր:

Մարդկության բարոյական զարգացումը ընթանում է դեպի համամարդկային արժեքների հումանիստորեն արտադրություն և հումանիստական օգտագործում՝ հանուն հասարակության բոլոր անդամների երջանկության: Այս նպատակին հասնելու գործում իր արժանի տեղն ունեն բարոյական գիտակցությունը և բարոյական հումանիստական, աստվածաշնչյան նորմերն ու կանոնները:

2.2. Աստվածաշունչը արժեքային համակարգի ձևավորման ուղի

Մարդիկ իրենց կենսագործունեության ընթացքում ապրում են որոշակի արժեքային համակարգում: Ոչ միայն և ոչ այնքան կուսական բնության բարիքները, որքան մարդկային գործունեության արդյունքները՝ կոչված են բավարարելու մարդու բազմաբնույթ պահանջմունքները: Արժեքներ են այն ամենը, ինչ արտահայտում է մարդու հասարակական գոյության եղանակը՝ մարդկային խելամիտ պահանջմունքները բավարարելու միջոցով:

Անտիկ փիլիսոփայական ուսմունքներում արժեքը նույնացվել է կեցության հետ՝ արժեքները կեցության մեջ են. սոփեստների ըմբռնմամբ <<Մարդը բոլոր իրերի չափանիշն է>>, հետևաբար, արժեքները խիստ անհատական են ու հարաբերական: Արդեն իսկ սոկրատ-պլատոնյան փիլիսոփայության մեջ արժեքային չափանիշները տեղափոխվում են հասկացությունների բնագավառ(բարիք, արդարություն, ճշմարտություն, բարություն): Արիստոտելից սկսվում է արժեքների տարբերակման

չափանիշը: Նա առանձնացրել է <<ինքնաբավ>> արժեքները(մարդ, երջանկություն, արդարություն, հավասարություն) իբրև ինքնարժեքներ: Արիստոտելը ընդունում է նաև արժեքների հարաբերականությունը, արժեքներ, որոնք տարբեր մարդկանց մոտ արժեքային տարբեր բովանդակություն ունեն: Միջնադարյան մտածողությունը և աստվածաբանական փիլիսոփայությունը բարձրագույն արժեքները կապում է աստվածային էության հետ: Ինքը՝ Աստվածը, բացարձակ արժեք է, իսկ արժեքների հիերարխիան կապված է աստվածային կատարելության և դրան մոտ լինելու չափանիշների հետ:

<<Արժեք>> հասկացությունը ներառում է իրականության երևույթների և առարկաների կարևորությունը, նշանակալից լինելը, այսինքն՝ դրանց համապատասխանությունը մարդկության, սոցիալական առանձին խմբերի և մարդկանց պահանջմունքներին:

<<Հասարակական արժեքները հիմնարար նորմեր են, որոնք ապահովում են հասարակական համակարգերի ամբողջականությունը, քանի որ դրանցում արտահայտված է տվյալ համակարգերի գոյության համար անհրաժեշտ որոշակի հոգևոր և նյութական բարիքների հատուկ կարևորությունը>>:[9]

Բարոյական դաստիարակության հիմքում դրված են հասարակական արժեքները. դրացից ամենաառաջավորը, բարձրն ու անփոխարինելին՝ կատարյալ մարդը: Եվ կատարյալ մարդու ձևավորման գործում մեծ է կրոնի, ինչպես նաև Աստվածաշնչի դերը: Աստվածաշունչը մարդուն տալիս է արժեքներ, որոնցից կարելի է նշել ազնվությունը: Աստվածաշնչում գրված է. <<իր շուրթերի հանցանքով չար մարդը որոգայթն է ընկնում, բայց արդարը դուրս է գալիս նեղությունից >>, <<իր բերանի պտղից մարդը բարիքով կկշտանա, և մարդու ձեռքի գործը իրեն կվերադառնա>>(Առակաց 12:13-14), <<խարդախ կշեռքը պիղծ է Տիրոջ առջև, բայց արդար կշեռքը հաճելի է նրան>>(Առակաց 11:1):<<Իսկ հոգու պտուղն այս է՝ սեր, խնդություն, խաղաղություն, համբերություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ինքնատիրապետում. այսպիսի բաներին օրենք

[9] "Краткий словарь по социологии", под общ. Ред. Д.М. Гвишилиани, М., Политиздат,1988, с. 442-442

չկա>>(Գաղատացիներ 5:22-23). ահա այսպիսի արժեքներ է տալիս Աստվածաշունչը մարդուն:

Աշխարհի մասին գիտելիքներից բացի, մարդու աշխարհայացքում առկա է նաև որո-շակիացված արժեքային համակարգ: Իր կյանքի ընթացքում մարդն առանձնացնում է առաջնայինը և երկրորդականը, այսինքն նա իր համար առանձնացնում է, թե որն է իր կյանքում առավել կարևոր: Նա գնահատում է աշխարհում կատարվող և գոյություն ունեցող դեպքերը և դրանով ստեղծում է իր արժեքային համակարգը, որը ոչ միայն մարդու կյանքին տալիս է իմաստ և նշանակություն, այլև որոշում է նրա գործողությունները և արարքները: Մարդու աշխարհն արժեքների համակարգ է կազմված՝ բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի, գեղեցիկի և տգեղի, արդարի և անարդարի, վեհի և ստորի, ուժեղի և թույլի և բազմաթիվ այլ երևույթների վերաբերյալ նրա պատկերացումներից: Եվ միայն Աստվածաշնչի բարոյական խրատի միջոցով մարդը կարող է լիարժեք պատկերացում կազմել այդ բարոյական արժեքների մասին: Աստծո հաստատած բարոյական օրենքը կարգավորում է մարդու ներքին կյանքը: Հետևելով նրա նորմերին՝ մարդը ձեռք է բերում ներքին խաղաղություն և երջանկություն: Օրենքը սովորեցնում է, թե մենք ինչպես պետք է վարվենք, որպեսզի մեր կյանքի ամբողջականությունը չխաթարվի, հոգևոր ու ֆիզիկական աշխարհների փոխհարաբերությունների մեջ աններդաշնակություն չմտնի: Եթե մարդն իր անձնական, ընտանեկան, հասարակական, մասնագիտական կյանքում և ցանկացած այլ գործունեության մեջ պահպանում է բարոյականության օրենքը, ապա ընթանում է ճիշտ ճանապարհով՝ զարգացնելով և կատարելագործելով իրեն:

Բարոյական օրենքի նորմերը Աստծո խոսքի մեջ են՝ Սուրբ Գրքում, որոնք դրսևորվում են կոնկրետ բարոյական պահանջների ձևով: Բարոյական օրենքը կատարող մարդը երբեք միայնակ չի լինում, նա բախտի քմահաճույքին մատնված չէ, քանի որ Աստված իր արարածին չի լքում: Աստված ներկա է մեր կյանքում, օգնում է նրանց, ովքեր կենդանի կապ են պահպանում իր հետ: Չնայած բոլոր դժվարություններին՝ մարդը դրա շնորհիվ իր հոգևոր հատկանիշները զարգացնելու,

ներդաշնակ անձնավորություն դառնալու, Աստծուն նմանվելու և իր կյանքի միջոցով շրջակա աշխարհը կատարելագործելու ընդունակ է մնում:

<<Երանելի է այն մարդը, որն անաստվածների խորհրդով չի ընթանում, մեղավորների ճանապարհում չի կանգնում, ո՛չ էլ հեգնողների աթոռին նստում, այլ նրա հաճույքն Աստծո օրենքն է և գիշեր -ցերեկ Նրա օրենքի մասին է խորհրդածում>>:

Բարոյական արժեքները բնորոշում են մարդու պահվածքն ընտանիքում, հասարակության մեջ, իր հարաբերություններն այլ մարդկանց հետ: Շատ կարևոր են հարաբերություններն ընտանիքում, ծնողների, հարազատների և մերձավորների նկատմամբ: <<Ձեր ծնողներին հնազա՛նդ եղեք Տիրոջով, որովհետև դա է ճիշտը. << Պատվի՛ր քո հորը և մորը>>. սա առաջին պատվիրանն է, որ խոստում ունի, որպեսզի լավ լինի քեզ համար, և երկար կյանք ունենաս երկրի վրա>>: Այս խրատական խոսքերը կարևոր դեր են խաղում երեխաների և ծնողների միջև ներդաշնակ հարաբերություններ դաստիարկելու գործում: Յուրաքանչյուրիս համար ծնողները կարևոր նշանակություն և դեր ունեն մեր կյանքում, և յուրաքանչյուրիս պարտքն է այնպես անել, որ լինել արժանի զավակ մեր ծնողների համար: <<Անզգամն անարգում է հոր խրատը, բայց հանդիմանությանը հնազանդ որդին ողջախոհ է>>:

Անհատը հոգևոր սկզբի կրողն է, իր մեջ ամբողջացնում է ամբողջ աշխարհը: Ինչպես մարդու մեջ է ամբողջացած աստվածության սկիզբը, այդպես Աստծու մեջ է արտացոլված մարդկայնությունը: <<Մարդու արժեքայնությունը – նրա հոգևոր, աստվածության եղելության մեջ է>>: Անձի բացարձակ արժեքը նրա աստվածացումն է:

Աստվածաշնչյան բարոյական նորմերը կարևոր ազդեցություն են ունենում մարդու արժեքային համակարգի ձևավորման վրա: Աստվածաշնչյան բարոյական նորմերի մասին պատկերացում ունենալու գործում մարդուն օգնում և ուղղորդում է Աստվածաշունչը: Այն օգնում է մարդուն հասկանալ և ընդունել այնպիսի բարոյական հատկանիշներ, ինչպիսիք են արդարությունը, համեստությունը, բարությունը, ներողամտությունը, հարգանքը, ազնվությունը: Եվ յուրաքանչյուր մարդը ինքը պետք

է կառավարի իր վարքը, հասկանա, թե որն է բարոյական կյանքը և արարքները, ընտրի բարոյական նորմեր, որոնք պետք է ուղեկցեն նրան ողջ կյանքի ընթացքում. <<Անմիտ մարդու սիրտը կարոտ է խելացի խորհրդին, բայց խելացի մարդն ինքն է ուղղում իր ընթացքը>>:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով թեման՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

•Արժեքները կողմնորոշում են անհատի գործունեության արժեքային բնույթն ու ուղղվածությունը: Սրանցով է որոշվում մարդկանց կոնկրետ գիտակցությունն ու վարքը, կարգավորվում նրա բազմակողմանի զարգացումը: Արժեքային համակարգի ձևավորման և հաստատման գործում կարևորագույն տեղ ունեն մարդկանց սոցիալական ակտիվությունն ու փորձը, իդեալներն ու բարոյական նորմերը, և հատկապես աստվածաշնչյան բարոյական նորմերը, դրանց նպատակադրվածությունը և իրացման միջոցները:

• Արժեքների բազմաբնույթ համակարգում յուրաքանչյուր կոնկրետ արժեք բավարարում է որևէ կոնկրետ պահանջմունք, որոնց համապատասխան այդ արժեքներն ունեն հիերարխիկ, կոնկրետ պատմական բնույթ:

• Միևնույն արժեքները տարբեր մարդկանց համար, նույնիսկ միևնույն իրադրության մեջ, ունեն տարբեր բովանդակություն: Արժեքների այդ հիերարխիկ բազմության մեջ կարևորագույնը հոգևոր արժեքներն են: Բայց արժեքների մեջ ամենաբարձրագույնը մարդն է, նրա կյանքը: Նա է արժեքների սուբյեկտը, ստեղծողն ու իրացնողը:

•Հասարակական գիտակցության բարոյական ձևը, արտացոլելով մարդկանց վարքն ու վարվելաձևը բարոյականի և անբարոյականի, բարու և չարի, խղճի, պարտքի և պատասխանատվության, արժանապատվության և երջանկության հասկացությունների, բարոյական ապրումների և զգացմունքների միջոցով, արժեքավորում և գնահատում է դրանք, դարձնում բարոյական հարաբերությունները կարգավորող նորմեր, սովորույթներ և ավանդույթներ:

•Յուրաքանչյուր մարդ բարոյական միևնույն արարքը գնահատում և արժեքավորում է բարոյական իր ըմբռնումներով և և գիտակցումով:

•Բարոյական արժեքների, նորմերի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար մարդուն օգնում է Աստվածաշունչը: Աստվածաշնչի շնորհիվ յուրաքանչյուր մարդու համար սեփականություն են դառնում շատ կարևոր գիտելիքներ, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից մարդուն:

• Հասարակությունը կարիք ունի բարոյական արժեքների մի այնպիսի հիմքի, որը մարդկանց ապահովություն և առաջնորդություն կտա:

•Որպեսզի հասարակությունը լինի կայուն, մարդիկ պետք է բոլորի կողմից ընդունված այնպիսի ամուր չափանիշներ ունենան, որոնք կսահմանեն, թե որն է բարին ու ճիշտը, չարն ու սխալ: Այս նպատակին հասնելու համար մարդիկ պետք է որպես բարոյական հիմք ընդունեն Աստվածաշնչում նշված բարոյական առակները, խրատները, պատգամները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աստվածաշունչ, Մայր Աթոռ, Սբ. Էջմիածին, 2003թ.**
2. **Ղուլումչյան Գ., Մանկավարժություն, Երևան, 2005թ**
3. **Հակոբյան Ս.Մ., Փիլիսոփայություն, Երևան, 2000թ.**
4. **Краткий словарь по социологии'', под общ. Ред. Д.М. Гвишилиани, М., Политиздат,1988**